ՀՏԴ՝902.03

«Հնագիտություն» առարկայի դասավանդման խնդիրները մարզային բուհերում Վանաձորի պետական համալսարանի օրինակով

Բենիկ Վարդանյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-162

Հանգուցային բառեր. *հնագիտություն, Հայաստանի հնագիտություն, դասավանդում, թանգարանային պրակտիկա, պեղումներ, հնագիտության դասավանդման մեթոդներ, հնագիտության դասագիրք*

Ներածություն

Հայաստանում հնագետ մասնագետներ թողարկում են ՀՀ բուհերը և ՀՀ ԳԱԱ-ն, սակայն «Հնագիտություն» առարկան ՀՀ տարբեր բուհերում դասավանդվում է՝ ելնելով բուհերի առանձնահատկությունից, կրթական ծրագրի պահանջներից և նպատակներից: Օրինակ՝ Երևանի պետական համալսարանում գործում է «Հնագիտություն և ազգագրություն» բակալավրական ծրագիր, որի նպատակն է պատրաստել մասնագետներ, որոնք կունենան հիմնարար գիտելիքներ հնագիտության և ազգաբանության, վերջիններիս տեսության և մեթոդաբանության, հետազոտության ժամանակակից մեթոդների ու գործիքների վերաբերյալ, պատրաստել հայաստանյան և միջազգային կրթական և գիտական շուկաներում մրցունակ մասնագետներ, որոնք ունակ կլինեն կատարելու գիտահետազոտական և գիտապրակտիկ աշխատանքներ [1]: Վանաձորի, Շիրակի, Գավառի պետական համալսարաններում «Հնագիտություն» առարկան դասավանդվում է «Պատմություն» մասնագիտության համատեքստում: Վանաձորի պետական համալսարանում (այսուհետ՝ ՎՊՀ) նշված առարկայի դասանդմանը հատկացված է 58 ժամ՝ 40 դասախոսական և 18 սեմինար պարապմունքների համար:

«Հնագիտություն» առարկայի դասավանդումը եվրոպական և ռուսական կրթական տարածույթում

Եվրոպական կրթական տարածույթում հնագիտությունը բակալավրիական ծրագրով դասավանդվում է փիլիսոփայության ֆակուլտներում:

Եվրոպական կրթական համակարգում հնագիտության դասավանդման գործում առանձնացվում է երկու հիմնական ուղղություն՝ «Հումբոլտյան համակարգը», որտեղ համալսարանական դասավանդման գործընթացում հնագիտությունը ընկալվում է որպես լիարժեք և ինքնուրույն գիտաճյուղ: Օրինակ՝ Գերմանիայի Մ. Լյութեր Հալլե-Վիտենբերգ համալսարանում Փիլիսոփայության ֆակուլտետի Արվեստի պատմության և Եվրասիայի հնագիտության ինստիտուտում գործում են Մշակույթի պատմության, Նախապատմական հնագիտության և Դասական հնագիտության ամբիոնները:

Գերմանիայում, հնագիտության բակալավրիական ծրագրում ուսանողներն ուղղորդվում են տարածաշրջանային և ժամանակաշրջանների ընտրությանը: Առանձին գիտաճյուղերի (օրինակ՝ հնամարդաբանություն, հնակենդանաբանություն, ճարտարապետություն, երկրաբանություն ևն) հրավիրվում են առանձին մասնագետներ: Գերմանական հնագիտության առանձնահատկությունն ուսանողներին դաշտային պրակտիկ աշխատանքների միջոցով մասնագիտական հմտությունների փոխանցումն է, որը տեղի է ունենում ինչպես Եվրոպայի տարածքի հուշարձանների պեղումներով, այնպես էլ՝ արտասահմանյան արշավախմբերում: Օրինակ, Հայաստանում յուրաքանչյուր տարի գործում են հայ-գերմանական արշավախմբեր (Արտանիշում – ղեկ. Ռ. Կունցե և Ա. Բոբոխյան, Տիրինկատարում – ղեկ. Պ. Հնիլա և Ա. Բոբոխյան, Լեռնակերտում – Ս. Ռայնհոլդ և Բ. Վարդան-

յան), որոնցում ներգրավված են Գերմանիայի տարբեր համալսարանների հնագիտության և հարակից գիտաճյուղերի ուսանողներ։

Եթե հնագիտության գերմանական դպրոցն ուղղված է ուսանողներին տիպաբանություն սովորեցնելուն և դաշտային աշխատանքներին, ապա Մեծ Բրիտանիայում հնագիտության դասավանդումն առավել կապված է տեսական և մեթոդական հարցերի հետազոտության հետ։

Ֆրանսիայում և Իսպանիայում բակալավրական ծրագրում հնագիտությունը դասավանդվում է որպես պատմության օժանդակ գիտություն։

Ռուսական կայսրությունում, այնուհետև Խորհրդային Միությունում, առկա էին «Հնագիտություն» առարկայի դասավանդման որոշ առանձնահատկություններ։

Հնագիտության դասավանդումը Ռուսական կայսրությունում սկսվում է 19-րդ դարի սկզբներին Ս. Պետերբուրգի համալսարանում։ Դասավանդման մեթոդաբանությունը և ուղղությունները փոխառնված էին Գերմանիայի Գյոթինգենի համալսարանից, որտեղ սովորել էին բազմաթիվ ռուս ուսանողներ։ Ցարական Ռուսաստանում հնագիտության հետազոտությունը ենթադրում էր հին մշակույթների, մասնավորապես դասական մշակույթի հետազոտություն [7]։ Ռուսական կայսրության տարբեր բուհերում հնագիտության դասավանդման հարցերը սկսեցին քննարկվել 19-րդ դարի երկրորդ կեսերից սկսած. 1874 թ. կոմս Ա. Ուվարովը Կիևում ներկայացրած զեկույցով հիմնավորեց բուհերում հնագիտության դասավանդման անհրաժեշտությունը՝ նշելով, որ «որպես գիտություն, հնագիտությունը տարատեսակ հուշարձանների տվյալներով հետազոտում է հին ժողովուրդների կենցաղը» [8, 93-95]։

Խորհրդային Միության բուհերում հնագիտության դասավանդման գործում էական նշանակություն ուներ 1922 թ. Մոսկվայի համալսարանի հասարակագիտության ֆակուլտետում Հնագիտության բաժանմունքի հիմնումը, որը ղեկավարում էր պրոֆ. Վ. Գորոդցովը։ Ֆակուլտետում դասավանդում էին Յու. Գոտիեն, Ֆ. Բալլոդը, Ա. Զախարովը և այլք։ Հնագիտության բաժանմունքը հատուկ տեղ էր հատկացնում ուսանողների դաշտային աշխատանքների կազմակերպմանը։

1939 թ. սկսած Մոսկվայի պետական համալսարանի հնագիտության ամբիոնում ձևավորվում է հնագետների թողարկման յուրատեսակ ավանդույթ, երբ հնագետ մասնագետները ուսումնառում էին «Պատմություն» կրթական ծրագրի համատեքստում։ Այս եղանակը հետագայում տիրապետող է դառնում խորհրդային մի շարք համալսարաններում։ Մոսկվայի համալսարանում հնագիտության ամբիոնը ղեկավարում էր պրոֆ. Արցիխովսկին, որի հեղինակած ձեռնարկը միավորում էր նախապատմության, անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանների հնագիտությունը։ Արցիխովսկու հնագիտության ձեռնարկի առանձնահատկությունն այն էր, որ վերջինս հնագիտության խնդիրների շարադրման համար օգտագործում էր ինչպես Խորհրդային Միության տարածքի հուշարձանների տվյալները, այնպես էլ Առաջավոր Ասիայի և Արևելյան Եվրոպայի։ Այդպիսով՝ վերջինս փորձում էր ցույց տալ մարդու առաջացման ժամանակաշրջանից մինչև միջնադար պատմական գործընթացների ձևափոխությունները [3]։ Ա. Արցիխովսկու ձեռնարկը վերահրատարակվել է բազմաթիվ լրամշակումներով [4-5], իսկ Դ. Ավդուսինի հեղինակած դասագիրքը դառնում է Խորհրդային Միությունում հնագիտության ուսումնառության հիմնական դասագիրքը [6]։

«Հնագիտություն» առարկայի դասավանդումը Խորհրդային Հայաստանում

Հայաստանի տարածքում հնագիտական առաջին աշխատանքները կատարվել են 1871 թ. Ալ. Երիցյանի կողմից, Լոռու Ակներ, Դսեղ, Սանահին և այլ գյուղերի տարածքում գտնվող դամբաններում։ 1893-94 թթ. Ակներում հնագիտական պեղումները շարունակում է Ն. Մառը։ Հնագիտական աշխատանքները շարունակվում են Հայաստանի տարբեր շրջաններում։

1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետությունում հիմնադրվում են հնագիտական հանձնաժողովներ, իսկ 1921 թվականին հիմնադրվում է Գեղարվեստական թանգարանը, որը 1922 թվականին վերանվանվեց Պետական Կենտրոնական թանգարան: Այնուհետ, 1935 թվականին այն բաժանվեց երեք մասի, որոնց մեկը Հայաստանի պատմության պետական թանգարանն էր: Հայաստանում հնագիտության կայացման գործում էական նշանակություն ուներ 1923 թվականին հիմնված «Հնությունների պահպանության կոմիտեն», իսկ 1937 թվականից ԽՍՀՄ ԳԱ «Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի Պատմության ինստիտուտի կազմում գործում էր հնագիտության բաժինը: 1959 թվականին այս բաժնի հիման վրա ստեղծվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որը մինչ այժմ հանդիսանում է Հայաստանում հնագիտական գործունեության կազմակերպման և գիտական արտադրանքի առաջատար ինստիտուտը:

Երևանի պետական համալսարանում 1921 թ. հնագետ Աշխարհաբեկ Քալանթարը հիմնադրում է Հին Արևելքի պատմության և հնագիտության ամբիոնը: Հնագիտության առարկայի դասավանդումը նրանից հետո՝ մինչև 1940 թ., շարունակել է Սմբատ Տեր-Ավետիսյանը, որի մահից հետո ամբիոնը դադարեցրել է իր գործունեությունը:

1968 թ. մայիսին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ պատմության ֆակուլտետում հիմնադրվում է հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոն՝ պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի գլխավորությամբ: 1975 թ. ամբիոնը վերանվանվել է հնագիտության և ազգագրության ամբիոն, որը մինչև 1982 թ. ղեկավարել է հնագետ, պրոֆ. Թ. Խաչատրյանը, այնուհետ՝ պրոֆ. Ս. Եսայանը: ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնում 2019 թ. բացվում է «Հնագիտություն և ազգագրություն» բակալավրիական կրթական ծրագիրը [1]:

«Հնագիտություն» առարկայի դասավանդումը ՎՊՀ-ում

Համալսարաններում հումանիտար պատմական ուղղվածության կրթության նպատակը պատմական գիտության տարբեր ուղղություններով՝ պատմություն, հնագիտություն, ազգագրություն, արևելագիտություն, աղբյուրագիտություն և այլն, բարձրորակ մասնագետների պատրաստումն է: Մասնագետներ, որոնք կլինեն մրցունակ և համաշխարհային պահանջներին համահունչ:

Մարզային բուհերում հնագիտության ուղղվածությամբ մասնագետների պատրաստումն ընդհանուր հումանիտար կրթական ծրագրի շրջանակներում իրականացվում է բուհում դասավանդվող «Հնագիտություն» առարկայի միջոցով: Ընդհանուր պատմական կրթական ծրագրում հնագիտության ոլորտով մասնագիտացումը մարզային բուհերում այնուհետև տեղի է ունենում կուրսային և ավարտական աշխատանքների միջոցով, որից հետո հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում, առկա են մասնագիտացումը շարունակելու երկու տարբերակ՝ ընդհանուր պատմական կրթության շրջանակներում հնագիտության ուղղությամբ մասնագիտացման և համապատասխան ուղղվածությամբ ավարտաճառի պատրաստում կամ ՀՀ ԳԱԱ կամ ԵՊՀ համակարգում «Հնագիտություն» մագիստրոսական ծրագրում ուսումնառելու ձևով:

Վանաձորի պետական համալսարանում գործում են Պատմություն մասնագիտության բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր: «Հնագիտություն» առարկան դասավանդվում է բակալավրական ծրագրի առաջին կուրսի առաջին կիսամյակում:

ՎՊՀ-ում 2018 թ. ի վեր դասավանդելով «Հնագիտություն» առարկան՝ մեր կողմից մշակվել են դասախոսությունների և սեմինարների անցկացման մոտեցումներ, որոնք հիմնված են ուսանողների դասապրոցեսում ակտիվ ներգրավման, դիդակտիկ նյութերի ցուցադրության և մշակման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և դաշտային աշխատանքների հետ համադրման սկզբունքների վրա:

Աղյուսակ 1. ՎՊՀ-ում «Հնագիտություն» առարկայի դասավանդման համառոտ բովանդակությունն՝ ըստ ուսումնական աշխատանքի տեսակների

Հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների	
		դասախոսություն	սեմինար պարապմունք
1.	Ներածություն, հնագիտության սկզբնաղբյուրները, կապն այլ գիտությունների հետ, հնագիտական մշակույթ հասկացությունը, հնագիտության խնդիրները:	2	1
2.	Հնագիտության ուսումնասիրության աստիճանները (աղբյուրագիտական, բացատրական, վերակազմական և էմպիրիկ-համեմատական կամ վիճակագրական):	2	1
3.	Հնագիտական ժամանակագրություն և շերտագրություն: Բացարձակ և հարաբերական ժամանակագրություն (թվագրում):	2	1
4.	Հնագիտական նյութերի հասակագրման մեթոդները:	2	1
5.	Քարի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները: Մարդու առաջացում:	2	1
6.	Հայկական լեռնաշխարհի պալեոլիթյան և ուշ պալեոլիթյան հնավայրերը:	2	1
7.	Միջին քարի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները: Հայաստանի էպիպալեոլիթը:	2	1
8.	Նեոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Նեոլիթյան հեղափոխությունը Հայաստանում: Վաղ երկրագործական մշակույթի սաղմնավորումը Մերձավոր Արևելքում:	2	1
9.	Առաջավոր Ասիայի և Հայկ. լեռնաշխարհի նեոլիթյան հնավայրերը:	2	1
10.	Էնեոլիթի բնութագիրն ու առանձնահատկությունները: Առաջավոր Ասիայի և Հայկ. լեռնաշխարհի էնեոլիթյան հուշարձանները:	2	1
11.	Վաղ բրոնզի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները:	2	1
12.	Միջին բրոնզի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները:	2	1
13.	Ուշ բրոնզի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները:	2	1
14.	Երկաթի դարի բնութագիրն ու առանձնահատկությունները:	2	1
15.	Ուրարտուի հնագիտություն:	2	1
16.	Հայաստանը հետուրարտական ժամանակաշրջանում:	2	1
17.	Հայաստանը անտիկ և հելլենիստական ժամանակաշրջանում:	2	1
18.	Հայաստանի վաղ և զարգացած միջնադարի մշակույթը:	2	1
19.	Հայաստանի ուշ միջնադարի մշակույթը:	2	1
20.	Հայաստանի հնագիտության զարգացումն ու հեռանկարները:	2	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Վանաձորի պետական համալսարանում «Հնագիտություն» առարկայի դասավանդումը կատարվում է թեմատիկ բաժանումներով: Թեմատիկ բաժանումները հիմնված են առարկային հատկացված դասաժամերի և կրեդիտների քանակի՝ ըստ կիսամյակի բաշխման տրամաբանության վրա: Դասավանդումն իրականացվում է գրքերի, դասագրքերի, դասախոսությունների փաթեթի, հոդվածների միջոցով: Դասավանդման պրոցեսում մեր կողմից որպես պարտադիր հանձնարարվող գրականություն, օգտագործվում են հետևյալ գրքերը՝

Renfrew C., Bahn P. G. Archaeology Essentials. Theories/Methods/Practice, Thames & Hudson Ltd, London, Fourth edition, 2018, Խնկիկյան Օ.Ա., Հայաստանի հնագիտություն, Երևան, 2009, Եսայան Ս., Հայաստանի հնագիտություն, Երևան, ԵՊՀ, 1992, ապա՝ Սարգսյան Գ., Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ, Ե., 2005, Badalyan R.S., Avetisyan P.S. Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia: I. Mt. Aragats and Its Surrounding Region, British Archaeological Reports, International Series 1697, Oxford, 2007, Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա., Ուրարտուի հնագիտություն, Ե., 2010, Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ., Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Ե. 2005:

Հնագիտական մասնավոր այն հարցերի (որոնք արծարծված չեն վերը նշված դասագրքերում) քննարկման ժամանակ ուսանողներին հանձնարարվում է մասնագիտական համապատասխան գրականություն:

Համալսարանում «Հնագիտություն» առարկայի դասավանդման համար նախատեսված ակադեմիական դասաժամերին օգտագործվում են դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ, բանավեճեր և պրակտիկ աշխատանքներ իրականացնելու համար: Լսարանային հանդիպումների ընթացքում կիրառվում են հիմնահարցային դասախոսության, դասախոսություն-երկխոսության, դասախոսություն-քննարկման, սեմինար-բանավեճի և այլ մեթոդները:

Մեթոդների ընտրությունը կախված է դասավանդվող թեմայի առանձնահատկություններից: Օրինակ՝ քննարկելով նոր քարի դարում տեղի ունեցած տեխնոլոգիական և սոցիալական զարգացումները, որոնք մասնագիտական գրականության մեջ առավել հայտնի են *«նեոլիթյան հեղափոխություն»* անունով, քննարկվում է «քաղաքակրթություն» հիմնաբառը: Ուսանողները ներկայացնում են իրենց պատկերացումներն այս տերմինի և դրանից բխող հասկացությունների, երևույթների վերաբերյալ: Քննարկելով, առանձնացնելով գրատախտակի վրա «քաղաքակրթություն» տերմինին բնորոշ և դրանից ածանցվող գաղափարները՝ դասախոսության ընթացքում ներկայացվում են դրանց առաջացման հնագիտական դրսևորումները: Այլ օրինակ՝ ուսանողների կողմից «քաղաքակրթություն» տերմինի քննարկման ժամանակ նշվել են «մշակույթ», «արհեստներ», «քաղաք», «զարգացած տեխնոլոգիաներ» հասկացությունները: «Արհեստներ» հասկացության քննության ժամանակ ուսանողներին լուսապատկերներով ներկայացվում են նոր քարի դարում արդեն որպես մասնագիտացված քարագործների, մանածագործների և այլ արհեստավորական խմբերի գոյության հիմնավորումներ Գյոբեկլի թեփեից, Քարահան թեփեից, Նևալի չորիից, Ակնաշենից, Առատաշենից և այլ հնավայրերից հայտնաբերված քարե քանդակների, մանածագործական գործիքների և այլնի տեսքով: Զարգացնելով թեման՝ ուսանողները մտագրոհի միջոցով հանգում են այն եզրակացության, որ նոր քարի դարում սկզբնավորվում են ժամանակակից քաղաքակրթական մոդելները:

Սեմինար-բանավեճ մեթոդը կիրառվում է հնագիտական այն թեմաների քննարկման ժամանակ, որոնց վերաբերյալ ուսանողների մոտ մշտապես առաջացել են տարակարծություններ և հարցադրումներ: Այդպիսի թեմաներից է, օրինակ նորքարեդարյան մարդու

տնտեսաձևի փոփոխությունը, որի արդյունքում որսորդ-հավաքիչը վերածվում է նստակյաց անասնապահ-երկրագործի: Արդյունքում նորքարեդարյան մարդը ստանում է ռեսուրսների կայունություն, հասարակական նոր ինստիտուտներ, սակայն ձեռք է բերում այնպիսի հիվանդություններ, որոնք որսորդ-հավաքիչը չուներ: Բանավեճ-քննարկման ժամանակ ուսումնառողները ներկայացնում են տնտեսաձևի փոփոխության դրական և բացասական կողմերը՝ հիմնավորելով դրանք գիտական փաստերով:

Մարզային բուհերում «Հնագիտություն» առարկայի դասավանդման և ընդհանրապես, «Պատմություն» մասնագիտության առանձնահատկություններից ելնելով, ուսումնառության ընթացքում հանձնարարվում են նաև հետազոտական աշխատանքներ: Առարկայի հանդեպ հետաքրքրության և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով, հետազոտական աշխատանքները (ինքնուրույն աշխատանքներ) հանձնարարվում են (բացի նախորոք հանձնարարված թեմաներից) ուսանողների ծննդավայրերի կամ բնակության վայրերին մոտ գտնվող պատմական կամ հնագիտական հուշարձանների վերաբերյալ:

Որպես նման մոտեցման արդյունավետության օրինակ, հիշատակելի են «Պատմություն» մասնագիտության ուսանողների կատարած աշխատանքները: Ուսանողի կողմից հետազոտվել են հայրենի եզերքի պատմամշակութային ժառանգությունը՝ հիմնված ինչպե՛ս գիտական գրականության, այնպե՛ս էլ՝ դաշտային աշխատանքների տվյալների վրա: Կատարված հետազոտության համալրված և մշակված տարբերակներով ուսանողները հանդես են եկել զեկուցումներով ՀՀ տարբեր բուհերի ուսանողական գիտական ընկերությունների գիտաժողովներում: Վանաձորի պետական համալսարանի որոշ ուսանողներ քննվող առարկայի շրջանակներում արդեն մասնակցում են դաշտային հնագիտական արշավախմբերի կազմում հնագիտական հուշարձանների պեղումներին:

Ելնելով այն դրույթից, որ «Հնագիտություն» մասնագիտությունը հիմնված է նյութական մշակույթի տարբեր դրսևորումների հետազոտության վրա, դասապրոցեսի ընթացքում ուսումնառողների ինքնուրույնությունը և կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ուսանողները ներգրավվում են հնագիտական նյութի հետ ինքնուրույն աշխատանքներ կատարելու մեջ: Մասնավորապես, սեմինար աշխատանքների ընթացքում, մեր կողմից պեղված հնագիտական հուշարձաններից ձեռք բերված արտեփաստերը նկարագրվում են դասապրոցեսի ընթացքում՝ ըստ նախօրոք հանձնարարված և մեկնաբանված ծրագրի: Արտեփաստերի գիտական նկարագրությունը ուսանողներին օգնում է հասկանալ անցյալում ստեղծված առարկաների պատրաստման տեխնոլոգիաները, կիրառության ոլորտները: Սեմինար պարապմունքներին քննարկվում և գրավոր նկարագրվում են նաև հնագիտական պեղված իրավիճակներ: Օրինակ՝ բրոնզի դարի հետազոտության շրջանակներում, թաղման բազմազան ձևերի նկարագրության ընթացքում, լուսապատկերի վրա ներկայացված դամբանները, թաղման իրավիճակները նկարագրվում են ուսանողների կողմից: Գնահատումը կատարվում է հանձնարարված առարկայի բազմակողմանի նկարագրության և գրավոր խոսքի ճիշտ շարադրման հիման վրա (նկ. 1):

Սեմինար պարապմունքների ընթացքում կիրառվում է նաև հանձնարարված թեմաների ինչպե՛ս խմբային, այնպես էլ՝ անհատական հրապարակային ներկայացման մեթոդը (պրեզենտացիա՝ լուսապատկերների կիրառմամբ): Նման մեթոդի կիրառումն ուսումնառողներին օգնում է առաջնահերթ ճիշտ պրեզենտացիաներ կազմելուն և դրանք հանրային ներկայացնելուն: Բանավեճերի, քննարկումների ընթացքում ուսումնառողներին հնարավորություն է տրվում ազատ արտահայտել իրենց դիտարկումները հետազոտվող հիմնահարցերի վերաբերյալ:



Նկար 1. Գործնական առաջադրանքի օրինակներ

Վանաձորի պետական համալսարանում վերջին հնգամյակում՝ մեր դասավանդման պրակտիկայի ընթացքում, յուրաքանչյուր կիսամյակ հնարավորություն է ստեղծվել ուսանողների համար մասնակցելու դաշտային հնագիտական աշխատանքներին կամ այցելելու պատմահնագիտական թանգարաններ, որն ուղեկցվում է հուշարձանների դիտարկմամբ:

Դաշտային մեկօրյա պրակտիկայի ընթացքում ուսումնառողները հնարավորություն են ստանում ամրապնդելու համալսարանում ստացած տեսական գիտելիքները պեղումների կազմակերպման, ընթացքի և մեթոդների մասին (նկ. 2):

Նկար 2. ՎՊՀ ուսանողների դաշտային պրակտիկան Մեծամորի հնավայրում (2019 թ.)

«Հնագիտություն» առարկայի դասավանդման հիմնահարցեր

Հայաստանում «Հնագիտություն» առարկայի դասավանդման գլխավոր խնդիրներից է ամբողջական և նոր դասագրքի բացակայությունը: Առկա դասագրքերը քննարկում են քարի և բրոնզի դարաշրջանները (Եսայան 1992, Խնկիկյան 2009 ևն): Ճիշտ է, վերջիններս ուսանողին հնարավորություն են տալիս ընդհանուր գծերով ծանոթանալ գիտության մեջ առկա պատկերացումներին և հասկացություններին, սակայն դրանք չեն ամփոփում հայագիտության մեջ վերջին ձեռքբերումները և տվյալները: Բացի այդ, հարմարեցված չեն կրթական ծրագրերին: Ուստի, առարկայի դասավանդման առաջնահերթ խնդիրներից է ամբողջական դասագրքի պատրաստումը, որը կլինի միջգիտակարգային՝ հնագիտություն, երկրաբանություն, աշխարհագրություն, ևն, կամփոփի քարի դարից մինչև միջնադար

ընկած ժամանակաշրջանը, հիմնված կլինի ժամանակակից տեխնոլոգիական հնարավորությունների վրա և կհամապատասխանի բուհական կրթական ծրագրերին:

Մարզային բուհերում հնագիտության դասավանդման խնդիրներից մեկը դասավանդվող առարկայի թեմաների կապակցումն է դասավանդվող այլ առարկաների հետ: Օրինակ, Վանաձորի պետական համալսարանում քննվող առարկան դասավանդվում է առաջին կուրսի առաջին կիսամյակում: Առարկայում քննվող հարցերի ժամանակագրական սահմանն ընդգրկում է մեզանից երկու միլիոն տարի առաջ ժամանակահատվածից ընդհուպ մինչև 17-18-րդ դարերը: Այն պարագայում, երբ զուգահեռ դասավանդվում են «Հայոց պատմություն» և «Հին Արևելքի պատմություն» առարկաները: Մասնավորապես, «Հայոց պատմություն» առարկան առաջին կիսամյակում ընդգրկում է մինչև մ. թ. ա. 1-մ. թ. 1-ին դարերը, իսկ «Հին Արևելքի պատմություն» առարկան ներկայացվում է խտացված ձևով: Այս պարագայում, «Հնագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում միջգիտակարգային մոտեցում ցուցաբերելիս, բախվում ենք այն խնդրին, որ երբ քննարկվում է, օրինակ, մ. թ. ա. 2-րդ հազարամյակում Մերձավոր Արևելքում տիրող մշակութային և քաղաքական իրադրությունը և համեմատականներ տարվում Հայկական լեռնաշխարհի համաժամանակյա իրողությունների հետ, ըստ կրթական ծրագրի, ուսանողները դեռ չեն հետազոտել այդ ժամանակաշրջանը:

Ուստի, անհրաժեշտություն եմ տեսնում «Հնագիտություն» առարկայի դասավանդման համար նախատեսված կրեդիտների ավելացման և դրա՝ առաջին կուրսի երկու կիսամյակներում դասավանդման, ինչը հնարավորություն կտա զուգահեռ հետազոտել դասավանդվող պատմական այլ հիմնարար առարկաների՝ Հայոց պատմության, Հին Արևելքի պատմության ժամանակաշրջանները մի կողմից պատմաքաղաքական, մյուս կողմից նյութական մշակույթի ասպեկտներով:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-162

Գրականություն

1. Հնագիտության և ազգագրության ամբիոն https://www.ysu.am/faculty/71/182 (մատչելի է 04.10.2023 թ.):
2. Հնագիտության և ազգագրության ամբիոն, բակալավրի կրթական ծրագիր https://www.ysu.am/faculty/71/educational-program-365 (մատչելի է 04.10.2023 թ.):
3. Арциховский А. В. Лекции по археологии, Ч. 1 и 2, Москва, 1938.
4. Арциховский А. В. Введение в археологию, Москва, 1941.
5. Арциховский А. В. Основы археологии, Москва, 1955.
6. Авдусин Д. А. Основы археологии: учебник для вузов по спец. «История», Москва, высш. школа, 1989.
7. Янин В.Л., Пряхин А.Д. Археология на исторических факультетах классических университетов Российской Федерации. http://www.main.vsu.ru/~CdH/Articles/04-06a.htm (մատչված է 07.10.2023)
8. Тихонов И. Л. К вопросу о начале университетской археологии в России. Вестник Санкт-Петербургского университета. История, N. 1-2, 2004, с. 93-101.
9. Янин В.Л. Посвящ. 60-летию кафедры археологии ист. ф-та Моск. тос. ун-та им. М. В. Ломоносова. Москва, 1999, с. 4

Проблемы преподавания предмета «Археология» в региональных вузах на примере Ванадзорского государственного университета

Беник Варданян

Резюме

Ключевые слова: *археология, археология Армении, преподавание, музейная практика, раскопки, методика преподавания археологии, учебник археологии*

В региональных университетах Республики Армения курс «Археология» входит в общую образовательную программу по специальности «История». Количество часов, выделенных на этот предмет, может различаться в зависимости от учебных заведений. В Ванадзорском государственном университете «Археология» преподается в объеме 58 академических часов. Мы разработали учебные материалы, включая лекции и учебники, для подготовки учебной программы, которая охватывает основы археологии и период археологии Армении с ранних исторических периодов до позднего средневековья.

В процессе обучения используются разнообразные методы, включая лекции, семинары, дискуссии, дебаты и практические занятия. На аудиторных занятиях используются методы проблемных лекций, лекций-диалогов, лекций-дискуссий, семинаров-дискуссий и другие, в зависимости от конкретной темы и методики.

Одной из проблем в преподавании «Археология» является отсутствие подходящего учебника, который бы полностью соответствовал учебной программе. Для решения этой проблемы предлагается разработка междисциплинарного учебника, включающего основы археологии, геологии и географии, и охватывающего археологию от каменного века до средневековья. Такой учебник должен быть основан на современных технологиях и научных достижениях, а также соответствовать учебным стандартам университетов.

Для более эффективного преподавания «Археологии» и подготовки будущих археологов предлагается увеличить количество кредитных часов, выделенных на этот предмет, и предоставить его в двух семестрах первого курса. Это позволит установить полную связь между «Историей Армении» и историческими периодами Древнего Востока.

The Challenges of teaching the Subject "Archaeology" in Regional Universities, using the Example of Vanadzor State University

Benik Vardanyan

Summary

Key words: *archeology, archeology of Armenia, teaching, museum practice, excavations, methods of teaching archeology, archeology textbook*

In regional universities of the Republic of Armenia, the course "Archaeology" is part of the general academic program within the specialization of "History." The number of hours allocated for this subject may vary depending on the educational institutions. At Vanadzor State University, "Archaeology" is taught for a total of 58 academic hours. We have developed educational materials, including lectures and textbooks, to prepare a curriculum that covers the fundamentals of archaeology and the archaeological periods of Armenia, ranging from early historical periods to the late Middle Ages.

Various teaching methods are employed during the learning process, including lectures, seminars, discussions, debates, and practical exercises. Classroom sessions utilize methods such as problem-based lectures, dialogical lectures, discussion-based lectures, seminar discussions, and others, depending on the specific topic and methodology.

One of the challenges in teaching "Archaeology" is the absence of a suitable textbook that fully aligns with the curriculum. To address this issue, we propose the development of an interdisciplinary textbook that encompasses the basics of archaeology, geology, and geography.

This textbook should cover archaeology from the Stone Age to the Middle Ages, based on contemporary technologies and scientific advancements, while complying with the educational standards of universities.

To enhance the effective teaching of "Archaeology" and the preparation of future archaeologists, it is suggested to increase the number of credit hours allocated for this subject in universities and to offer it over two semesters in the first year. This approach will establish a comprehensive link between "Armenian History" and historical periods of the Ancient East.

Ներկայացվել է 16.10.2023 թ.
Գրախոսվել է 26.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.